

ՆԱԽԱԲԱՆ

Ներսես Երիցյան

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար

Հայաստանի ազգային մրցունակության առաջին զեկույցը հրատարակվում է մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի կառավարությունը մեկնարկել է տնտեսական քաղաքականության գերակայությունների վերանայման և նոր սերնդի բարեփոխումների իրականացման գործընթացը: Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի տնտեսական համակարգի գնահատումը մրցունակության համատեքստում՝ նպատակ հետապնդելով տալ երկրի ոչ միայն մրցունակության այսօրվա պատկերը և նրա դիրքն աշխարհում, այլև մատնանշել գլոբալ տնտեսությունում Հայաստանի մրցակցային դիրքի բարելավման հնարավոր մոտեցումները:

Հայաստանը լուրջ ձեռքբերումներ է ունեցել մակրոտնտեսական ցուցանիշների և գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, սակայն այն դեռևս զիջում է համադրելի երկրներին կարևորագույն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ենթակառուցվածքը, կրթական համակարգը, ֆինանսական շուկաների արդյունավետությունը, տեխնոլոգիական պատրաստվածությունը, գործարարության զարգացվածությունը և նորարարությունները: Իսկ սրանք այն գործոններն են, որոնք կարևորագույն նախապայման են նորարարական և գիտելիքահենք տնտեսության համար, որի ձևավորումը մեր կառավարության հիմնական նպատակակետն է և ժամանակի հրամայականը:

Ձեկույցն ընդգծում է Հայաստանի տնտեսական ռազմավարության այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Հայաստանի գլոբալ արժեքային առաջարկի հստակեցումը, մրցունակության առանցքային խթանիչների օգտագործումը, ճյուղային գերակայությունների սահմանումը: Որդեգրելով ռազմավարական երկարաժամկետ նպատակադրում՝ անհրաժեշտ է, սակայն, իրականացնել այնպիսի քայլեր, որոնք կբերեն արդյունքներ արդեն կարճաժամկետ հատվածում և ուղղված կլինեն Հայաստանի մրցակցային դիրքի որոշակի բարելավմանը, ինչպես նաև երկարաժամկետ բարեփոխումների հաջողության նկատմամբ վստահության պահպանմանը:

Պարունակելով տնտեսական վերլուծություններ, միջերկրային բազմակողմանի համադրություններ և հաջողակ երկրների փորձի վերաբերյալ հարուստ նյութ՝ հուսով ենք, որ Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը իր ուրույն ավանդը կունենա Հայաստանի նոր սերնդի բարեփոխումների ծրագրերի մշակման, և Հայաստանում մրցունակության հայեցակարգի լայն տարածման գործում: Կարծում են, որ սույն զեկույցը կաջակցի շահագրգիռ կողմերի միջև զարգացման ռազմավարության շուրջ երկխոսության գործընթացին, որը նպատակ է հետապնդում հասարակությունում երկրի հեռանկարի ընդհանրական տեսլականի ձևավորմանը և ուժերի համախմբմանն ու արդյունավետ օգտագործմանը՝ հանուն մեր երկրի բարօրության:

ՆԱԽԱԲԱՆ

Պրոֆեսոր Մայքլ Պորտեր Հարվարդի համալսարան

Հարածուն ինտեգրացվող և բաց համաշխարհային տնտեսության համատեքստում մրցունակությունը դարձել է մտահոգության կենտրոնական առարկա՝ թե՛ զարգացած, և թե՛ զարգացող երկրների համար: *Հայաստանի ազգային մրցունակության զեկույցի* այս առաջին հրապարակումը վկայում է այն մասին, որ Հայաստանը ևս սկսում է լրջորեն վերաբերվել մրցունակությանը և տնտեսական զարգացման գործուն ռազմավարության մշակմանը: Արդյունքում Հայաստանի քաղաքացիները կհանդիսանան վերջնական շահառուները՝ ներկա և ապագա սերունդների առջև կենսունակ տնտեսության կողմից տրամադրվող հնարավորությունների շնորհիվ:

1991 թվականին Խորհրդային Միությունից անկախացումից հետո Հայաստանը անցել է զարգացման փոթորկալից փուլով: Վերջին մի քանի տարիների ընթացքում երկիրը ցուցաբերում է տնտեսական աճի տապալորիչ տեմպեր: Այնուամենայնիվ, ինչպես շեշտում է *Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը*, այդ աճը պայմանավորող մակրոտնտեսական գործոնները, դրամական փոխանցումները և օտարերկրյա օժանդակությունը կենսունակ և բավարար չեն հետագա տնտեսական աճի ապահովման համար: Հայաստանը կարիք ունի ճշգրտելու իր դիրքավորումը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության համատեքստում և մշակելու միկրոտնտեսական հիմքերի զարգացման ռազմավարություն: Այս ամենը պահանջում է Հայաստանի ներկա վիճակի և զարգացումների օբյեկտիվ վերլուծություն:

Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը մեծապես նպաստում է այն բանին, որ մրցունակության քննարկումը ուղղվի դեպի ավելի առաջնակարգ և փաստերով հիմնավորված հարթություն: Չեկույցը օգտակար ավանդ կլինի նաև նոր ձեւավորված Հայաստանի ազգային մրցունակության խորհրդի համար՝ խոստումնալից նոր հաստատություն, որը հնարավորություն ունի բոլոր շահագրգիռ կողմերին համախմբելու մրցունակության միասնական հայեցակարգի շուրջ:

Ես հպարտ եմ, որ Երևանի պետական համալսարանը, որտեղ Չեկույցի գլխավոր հեղինակի կողմից դասավանդվում է Հարվարդում իմ կողմից մշակված մրցունակությանը և տնտեսական զարգացմանը վերաբերող դասընթացը, հանդիսանում է այդ ծրագրում ընդգրկված 75 բուհերից կազմված համաշխարհային ցանցի անդամ: Ես հուսով եմ, որ այդ ցանցի կազմում գտնվող համալսարանները կանեն ավելին, քան պարզապես դասավանդելն է, այլ կարևոր ներդրում կունենան իրենց երկրներում մրցունակության հետազոտման և կիրառման մեջ: *Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը* ներկայացնում է հետազոտական կենտրոնների, համալսարանների, կառավարության և մասնավոր ոլորտի միջև փոխգործունեության այն տեսակը, որն անհրաժեշտ է Հայաստանի տնտեսության բարգավաճման համար: